Հաստատված է

Հյուսիսային համալսարանի գիտական

խորհրդի 2021թ. հոկտեմբերի 7-ի

որոշմամբ (արձ. N:41)

Հյուսիսային համալսարանի ռեկտոր

Մ.Մակիչյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ (ՆԵՐՔԻՆ և ԱՐՏԱՔԻՆ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ) ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. 1. Կանոնակարգը սահմանում է լրացուցիչ կրթության կազմակերպական հիմքը, կարգավորում է լրացուցիչ կրթության մասնակից կողմերի ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավահարաբերությունները:

1.2. Լրացուցիչ կրթական ծառայությունների կենտրոնը (այսուհետև՝ Կենտրոն) Հյուսիսային համալսարանի (այսուհետև՝ Համալսարանի) ստորաբաժանում է, իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, սույն կանոնակարգով և Համալսարանի ներքին այլ իրավական ակտերով:

1.3. Լրացուցիչ կրթության մասնակիցներն են՝ Համալսարանը (լրացուցիչ կրթության կենտրոնը), կրթական ծառայություններ իրականացնող մասնագետները և լրացուցիչ կրթություն ստացողները:

1.4. Լրացուցիչ կրթական ծառայության իրականացումից հետո մասնակցին տրվում է Համալսարանի կողմից հաստատված և կնքված՝ մասնագիտական որակավորում չպարունակող փաստաթուղթ՝ հավաստագիր, եթե մասնակիցը դրական գնահատական է ստացել դասընթացի ավարտին նախատեսված ամփոփիչ գնահատումից: Լրացուցիչ կրթական ծրագրով ուսուցումը չի հանգեցնում որակավորման աստիճանի շնորհման:

1.5. Լրացուցիչ կրթական ծրագրին մասնակցելու իրավունք ունի յուրաքանչյուր ոք, եթե բավարարում է տվյալ դասընթացի մուտքային պահանջները: Բացառություն կարող են կազմել այն դեպքերը, երբ Համալսարանը հետապնդում է որոշակի նպատակ՝ որոշակի շրջանակի ունկնդիրների համար: Լրացուցիչ կրթական ծառայությունները կարող են մատուցվել վճարովի և անվճար սկզբունքով:

2. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1. Կենտրոնի գործունեության նպատակն է լրացուցիչ որակյալ կրթական ծառայություններ մատուցել Համալսարանի արտաքին ու ներքին շահակիցներին:

2.2.Կենտրոնի խնդիրներն են՝

2.2.1. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին հարցումներ անցկացնել արտաքին ու ներքին շահակիցների շրջանում՝ կրթական կարիքները բացահայտելու և լրացուցիչ կրթական ծրագրերի ուղղվածությունը որոշելու համար: Համալսարանը նույնպես, իր հնարավորությունները կամ շահառուների հնարավոր պահանջները հաշվառելով, կարող է առաջարկել կրթական ծառայություններ արտաքին ու ներքին շահակիցներին:

2.2.2. Հստակեցնել կենտրոնի մատուցած կրթական ծառայությունների ուղղությունները՝ ներկայացնելով համապարփակ ծրագիր յուրաքանչյուր ուսումնական տարվա համար(առաջին կիսամյակի սկզբում):

2.2.3. Համակարգել, կազմակերպել և իրականացնել լրացուցիչ կրթական ծրագրերի յուրաքանչյուր դասընթացը սահմանված ժամկետների մեջ:

2.3. Կենտրոնի գործառույթներն են՝

2.3.1. Համալսարանի հիմնական ծրագրերից դուրս, կամավորության սկզբունքով, Իրականացնել լրացուցիչ կրթական ծառայություններ՝ ուղղված բուհի սովորողների, շրջանավարտների, այլ շահառուների հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, մասնագիտական և անձի համընդհանուր իրազեկվածությանը միտված գիտելիքների կատարելագործմանը:

2.3.2. Ձևավորել տվյալ դասընթացի մասնակիցների խումբ, ընտրել կրթական ծրագրի մասնագետին (բուհից կամ հրավիրյալ), որն էլ պետք է մշակի և ներկայացնի լրացուցիչ

կրթական ծրագիրը համալսարանի լրացուցիչ կրթության կենտրոն: Դասընթացի ծրագիրը պետք է ներառի՝

ա.դասընթացի ընդհանուր նկարագիրը, նպատակը, վերջնարդյունքը,

բ. ժամերի քանակը,

գ. թեմաները,

դ.ուսուցման տևողությունը:

2.4. Լրացուցիչ կրթական ծրագրերն իրականացնող մասնագետ ընտրելիս կարևորել համապատասխան մասնագիտական որակավորումը, աշխատանքային փորձն ու դասավանդման մեթոդաբանությունը:

2.5.Լրացուցիչ կրթական ծրագրի տևողությունը սահմանել մեկ ամսից մինչև երեք ամիս՝ պայմանավորված դասընթացի առանձնահատկություններով և մասնակիցների ընդհանուր գիտելիքներով տվյալ առարկայից:

2.6. Մասնագիտական որակավորման կատարելագործման ուղղությամբ համապատասխան դասընթացների դեպքում կենտրոնի առաջարկությամբ Համալսարանի համապատասխան ֆակուլտետային խորհուրդը հաստատում է լրացուցիչ կրթական ծառայության՝

1) ուսումնական ծրագիրը.

2) դասացուցակը.

3) դասամատյանը:

2.7.Կենտրոնը պարտավոր է լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն տարածել յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին (սեպտեմբերի երկրորդ կեսին) ինչպես բուհի կորպորատիվ կապուղիներով՝ պաշտոնական կայք, ֆեյսբուք սոցիալական ցանց և այլն, այնպես էլ, անհրաժեշտության դեպքում, համապատասխան հայտարարություն տարածել հանրապետական տարբեր լրատվամիջոցներով:

3.ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Կենտրոնի աշխատանքների ղեկավարումը սույն կանոնակարգին և Համալսարանի ներքին կանոնակարգերի համաձայն իրականացվում է Կենտրոնի ղեկավարի կողմից:

3.2. Կենտրոնի աշխատանքների իրականացման համար կենտրոնում կարող են ներգրավվել համապատասխան մասնագետներ:

3.1. ԿԵՆՏՐՈՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԵՆ՝

4.1.ներկայացնել առաջարկներ ռեկտորին՝ Կենտրոնի գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով,

4.2.ունենալ կազմակերպական և նյութատեխնիկական պայմաններ մասնագիտական գործունեության համար,

4.3.ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

5. ԿԵՆՏՐՈՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ՝

5.1 Լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման գործընթացի կազմակերպում և համակարգում:

5.2.Արտաքին ու ներքին շահակիցների կարիքի գնահատում, դասընթացների հստակեցում՝ համաձայն Կենտրոնի հաստատած կարիքի գնահատման հարցաշարի:

5.3. Լրացուցիչ կրթական ծառայությունների համապարփակ ծրագրի կազմում և ներկայացնում Համալսարանի ռեկտորի հաստատման:

5.4. Առաջարկություն ներկայացնել համապատասխան մասնագետին Կենտրոնի աշխատանքներում ընդգրկելու նպատակով՝ հիմք ընդունելով շահակիցների կարիքի և նախնական գիտելիքների գնահատման արդյունքների վերլուծությունը:

5.4.1.Ղեկավարը համապատասխան ամբիոնի հետ՝

ա. իրականացնում է մասնագետի ընտրություն,

բ. կատարում լրացուցիչ կրթական ծրագրի փորձաքննություն.

գ. Պարբերաբար անցկացնում մշտադիտարկում:

5.5.Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին իր անմիջական ղեկավարին ներկայացնում է հաշվետվություն՝ կատարված աշխատանքների վերաբերյալ:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Կենտրոնի աշխատանքներում ներգրավված մասնագետը վճարվում է Համալսարանում գործող վճարման կարգի համաձայն:

6.2. Լրացուցիչ կրթական ծառայությունների իրականացման ընթացքում համալսարանը պարտավոր է ապահովել մասնակիցների անվտանգությունը և սանիտարահիգիենիկ պայմանները: Սպորտային խմբակների դեպքում բժշկի ներկայությունը պարտադիր է:

6.3.Կենտրոնը կարող է փոփոխել իր կարգավիճակը կամ դադարեցնել գործունեությունը Համալսարանի ռեկտորի հրամանով՝ Համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով:

6.4 Կենտրոնի կառուցվածքի, կենտրոնի ենթակայության, հաշվետվողականության սույն կանոնակարգով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են լրացուցիչ փաստաթղթերով:

6.5. Սույն կանոնակարգը կարող է փոփոխվել կամ լրացվել գիտխորհրդի երաշխավորությամբ՝ Համալսարանի ռեկտորի հրամանով:

6.6.Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում հաստատման պահից: